ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԷՐ

28.03.2016 18:50

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը Արա Զոհրաբյանի գլխավորությամբ «Իրազեկ բանակ» ծրագրի շրջանակներում երկօրյա աշխատանքային այցով գտնվում էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Մարտի 25-ին փաստաբաններին ընդունել է ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը: Նախագահի հետ հանդիպմանն արծարծվել են Արցախի և Հայաստանի համապատասխան կառույցների փոխգործակցությանն առնչվող հարցեր: Նախագահը նշել է համագործակցության օգտակարությունն ու պահանջվածությունը իրենց հանրապետության համար: Այցի շրջանակներում պատվիրակությունն այցելել է նոր շենք տեղափոխված Արցախի փաստաբանների պալատի գործընկերներին: Համատեղ շրջայցի ընթացքում գործընկերները քննարկել են իրականացվելիք համատեղ ծրագրերը՝ մասնավորապես անդրադառնալով Հայաստանի փաստաբանների պալատի կողմից առաջիկայում տրամադրվելիք մասնագիտական աջակցության մանրամասներին: Հստակեցվել է նաև փոխադարձ հանձնառությունների շրջանակներում Արցախի փաստաբանների հետագա կատարելագործմանն ուղղված գործողությունների հաջորդականությունը:

Փաստաբանների պալատի պատվիրակության հաջորդ հանգրվանը զորամասերից մեկն էր, որտեղ «Գիրք զինվորին» նախաձեռնության շրջանակներում հավաքագրված 884 գիրքը նվիրվել է զինծառայողներին: Պատվիրակության անդամները ծանոթացել են զինվորների առօրյային, զրուցել զինվորների հետ: Ինտերակտիվ դասախոսության շրջանակներում Պալատի ներկայացուցիչները ներկայացրել են մարդու իրավունքների պաշտպանությանը,արժանապատվությանը և իրավական երկրի օրինապահ քաղաքացի լինելուն վերաբերող խնդիրներ, պատասխանել են զինվորների հարցերին: Պատվիրակությունը եղել է նաև առաջնագծում:

Մարտի 26-ին պատվիրակության ղեկավար Արա Զոհրաբյանի գլխավորությամբ ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները վարպետության դաս են անցկացրել Արցախի պետական համալսարանի ուսանողների համար: Դասին ներկա է եղել նաև համալսարանի ռեկտորը և պրոֆեսորադասախոսական կազմը: Ուսանողները հետաքրքրվել են փաստաբանի մասնագիտական գործունեությանը վերաբերող հարցերով:

ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ՄԻ ԱՅՆՊԻՍԻ
ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ՏԱՐԱԾԱԾՐՔԱՆՈՒՄ,
ՈՐ „ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԵՆՔ" ՌԺԵՂ ԲԱՆԱԿ
ՈՒՆԵՆԱԼՈՒ:
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA


ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Առաջարկվող նորություններ

14.07.2014ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԼՂՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

18.03.2016ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԾԱՌԱՅՈՂ ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ Է ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

25.03.2016ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ. Artsakhtv.am

26.03.2016ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԱՐՑԱԽՑԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ. Artsakhtv.am

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })